ԼՈՒՐԵՐ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԻՑ

Այս տարվա Ծաղկազարդի տոնի առթիվ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը Բուխարեստից ժամանել է Պլովդիվ և տիրացու Մկըրտիչ Մեսրոպովիչին ձեռնադրել քահանա՝ նրան վերանվանելով տեր Սահակ:

Այնուհետև առաջնորդ սրբազանն այցելում է թեմի մեկ-երկու եկեղեցիները և Բանին կենաց քարոզությամբ մխիթարում իր ժողովրդին:

Տ. Տիրայր սրբազանի հաջորդ այցելությունը բուլղարահայ թեմ տեղի է ունեցել մայիսի 24-ին՝ Պլովդիվի ծերունազարդ ավագերեց տ. Գևորգ քհն. Սարյանի՝ հանգըստյան անցնելու հանդիսությանը նախագահելու համար:

Արժանապատիվ տ. Գևորգ ավագ քհն. Սարյանը ծնվել է Թուրքիայի Պրուսա վիլայեթի Կեմլեյիկ քաղաքում 1886 թվականին: Նա տեսել է եղեռնի սարսափելի արհավիրքները, հասել մինչև Դեր-Զոր, ազատվել հրաշքով:

Տեր հայրը դեռ մանկուց ունեցել է քաղցր ձայն: Եկեղեցական երաժշտության ու ձայնագրության մեջ եղել է հմուտ և այդ իսկ պատճառով վաղ հասակից իրեն նվիրել է հայ եկեղեցու ծառայությանը որպես դըպրապետ՝ Վառնա, Շումեն, Խասկովո քաղաքներում, իսկ վերջին 33 տարիների ընթացքում քահանայագործում է Պլովդիվ քաղաքում:

Ազգիս Հայոց Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով տ. Տիրայր եպս. Մարտիկյանի միջնորդությանը, Իր մայիս 5 թվակիր օրհնության կոնդակով հայրապետական Իր բարձր գնահատությանն է արժանացրել տ. Գևորգ ավագ քհն. Սարյանին.

«Աստուծո ողորմությամբ ձեր կյանքը իմաստավորվեցավ երկար տարիներու նվիրյալ ծառայությամբ մեր սուրբ եկեղեցվույն, իբրև բարի ու հավատարիմ հոգևոր սպասավոր, միշտ սիրված և հարգված Պոլսկարիո հայ հավատացյալ ժողովուրդի կողմե:

Այժմ ծերունազարդ տարիքի հասած, արդար հպարտանքով դուք կրնաք ձեզ հոգեպես մխիթարված զգալ, ձեր բոլորանվեր վաստակին համար, պայծառ գիտակցությամբ թե ձեր պարտքը կատարեցիք խղճի մտոք, իբրև «մշակ առանց ամօթոյ» Տիրոջ անդաստանին մեջ:

Մեզի համար մեծ ուրախություն է հաստատել և գնահատել ձեր բազմամյա ծառայությունը, և ընդառաջելով թեմիդ առաջնորդ գերաշնորհ տ. Տիրայր եպիսկոպոսի միջնորդության, այսու Մեր կոնդակով ողջունել ձեզ հայրական սիրով և ձեզի առաքել Մեր հայրապետական օրհնությունը, մաղթելով որ Տերը ձեզի պարգևե ևս երկար ու խաղաղ տարիներ, որպեսզի հավատավոր հոգիով և բարի խոսքով, շարունակեք ջերմացնել ու մխիթարել ձեր հավատացյալ զավակներուն հոգիները:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն ձեզի վերստին ողջույն և օրհնություն:

«Ողջ լերուք, զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամեն»:

Հայրապետական սույն կոնդակը մայիսի 27-ին ընթերցվել է Պլովդիվի հայոց եկեղեցում:

Օրվա պատարագիչն է եղել նորապսակ տ. Սահակ քահանան: Պատարագի երգեցողությունը կատարել է «Շնորհալի» երգչախումբը՝ մասնակցությամբ վաստակավոր դպրապետ Սարգիս Պալթայանի:

«Հայր մեր»-ի ժամանակ քարոզել է տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, վեր հանել տ. Գևորգ ավագ քահանայի արժանիքները և նրան ցանկացել քաջառողջություն, արևշատություն, ծերության խաղաղ ու երջանիկ օրեր:

Սրբազան հայրն ապա իր քարոզի մեջ անդրադարձել է նորապսակ տ. Սահակ քահանայի գործունեությանը, հորդորել նրան՝ լինել հավատավոր, ավանդապահ, հայրենանվեր հոգևորական, հավատարիմ նախնիների սուրբ ավանդներին և մաղթել նրան հաջողություն իր հոգևոր ծառայության ասպարեզում:

ցում պատարագ է մատուցել տ. Գևորգ ավագ քհն. Սարյանը:

Տ. Տիրայր եպս. Մարտիկյանը «Հայր մեր»-ից առաջ քարոզել է՝ հայրապետական Աթոռը Սսից Էջմիածին տեղափոխվելու պատմական մեծ ու կարևոր իրադարձության մասին: Նա իր քարոզի վերջում աղոթության և գահակալության երկար ու

27 մայիս 1973, կիրակի, Պլովդիվի եկեղեցական արարողությունների մասնակիցների և հյուրերի խմբանկարը
Մեջտեղը առաջնորդ գեր. տ. Տիրայր եպիս. Մարտիկեան, ձախին՝ տ. Գեորգ քահանա Սարյան: Աջեն չորրորդ նորապսակ տ. Սահակ քահանա Մեսրոպովիչ:
Ոտքի՝ «Ծնորհալի» երգչախումբի անդամները:

Հավարտ ս. պատարագի Պլովդիվի եկեղեցական վարչությունը տեղի «Թրիմոնցիում» հյուրանոցի ճաշարանում կազմակերպել է ճաշկերույթ, որի ընթացքում առաջնորդ սրբազանն առաջին բաժակն առաջարկել է ըմպել Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի արևշատության կենացը:

Ներկաներից ոմանք իրենց բաժակաճառերում դրվատել են տ. Գևորգ ավագ քահանայի հոգևոր ու հայրենանվեր գործունեությունը:

Մայիսի 31-ին, հինգշաբթի օրը, Համբարձման տոնին, Պլովդիվի հայոց եկեղե-

երջանիկ տարիներ է ցանկացել Վեհափառ Հայրապետին՝ ի պայծառություն Մայր Աթոռի և հայ եկեղեցու:

Հավարտ ս. պատարագի, առաջնորդ սրբազանի նախագահությամբ, կատարվել է հայրապետական մաղթանք:

Այնուհետև տ. Տիրայր եպս. Մարտիկյանը այցելել է Սոֆիա և հունիսի 3-ին պատարագել տեղի ս. Աստվածածին եկեղեցում՝ մխիթարելով տեղի հայ հավատացյալներին: Նույն օրը սրբազանը, հրաժեշտ առնելով Բուլղարիայի թեմից, մեկնել է Բուխարեստ: